ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծրագրի արդյունքում գյուղաբնակ տնտեսվարողների համար բարենպաստ միջավայրի ձևավորման մասին

Տաթև բնակավայրի բնակչությունը շուրջ 650 մարդ է: Տաթև-Կապան ճանապարհի ասֆալտապատման և դրա արդյունքում առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով Տաթև բնակավայրում վերջին շրջանում նկատվում է որոշակի տնտեսական աշխուժացում, մասնավորապես՝ թե՛ հայ, թե՛ հարևան երկրների բեռանփոխադրող վարորդներն անցնում են բնակավայրի տարածքով, ինչը հանգեցնում է նոր բիզնեսների ստեղծմանը: Սակայն զարգացած ենթակառուցվածքներ չունենալը բացասաբար է անդրադառնում բնակավայրի ընդհանուր տնտեսական միջավայրի զարգացման վրա: Բնակավայրում բացակայում են մշակութային օջախները, սպորտդպրոցները, վերանորոգման ենթակա է ՆՈՒՀ-ի շենքը: Ծրագրի իրականացման արդյունքում վերանորգված մանկապարտեզը կօգնի գյուղաբնակ տնտեսվարողներին/հատկապես՝ կին գործարարներին, շուրջ 18 հոգի/ ազատորեն աշխատել գործարար ոլորտում՝ երեխաներին մանկապարտեզ ուղարկելով:

Ծրագրի արդյունքում նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի աճի մասին

2022 թվականի հունվար ամսի դրությամբ Տաթև բնակավայրի ՆՈՒՀ է այցելում 40 երեխա, սակայն կանխատեսվում է ՆՈՒՀ այցելող երեխաների թվաքանակի աճ՝ տարեվերջին՝ շուրջ 60, 2023՝ շուրջ 76, 2024՝ շուրջ 84 երեխաներ՝ հաշվի առնելով համայնքում ծնելիության թվերը : Դրա հետ մեկտեղ Տաթև բնակավայրում վերանորոգված մանկապարտեզը կարող է ընդունել նաև հարևան բնակավայրերի՝ Սվարանցի/8 երեխա/ (Սվարանց-Տաթև հեռավորությունը 2կմ է) և Տանձատափի /6 երեխա/(Տանձատափ-Տաթև հեռավորությունը 3 կմ է) նախադպրոցական տարիքի երեխաներին, քանի որ նշված բնակավայրերում բացակայում է մանկապարտեզը և նախադպրոցական տարիքի երեխաները զրկված են մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից:

Ծրագրի արդյունքում երեխաների համար նախադպրոցական կրթության կազմակերպում բարեկարգ պայմանների մասին

Մանկապարտեզի ներկայիս պայմանները բավարար չեն նախադպրոցական կրթության պատշաճ և բնականոն կազմակերպման համար, չեն պահպանվում նույնիսկ հիգիենայի տարրական կանոնները, երեխաները և աշխատողները օգտվում են դպրոցի սանհանգույցից: Վերանորգման արդյունքում կունենանք բարեկարգ, անհրաժեշտ չափորոշիչներին համապատասխան կազմակերպված նախադպրոցական կրթության կազմակերպում: Մասնավորապես՝ վերանորոգման արդյունքում մանկապարտեզը կունենա 2 խմբասենյակ, 1 խոհանոց 2 սանհանգույց, մանկապարտեզը կվերազինվի նոր գույքով:

Ծրագրի արդյունքում ծնողների՝ նախադպրոցական կրթությունից բավարարվածության բարձր մակարդակի մասին

Նախադպրոցահասակ երեխաներից շատերի ծնողները /շուրջ 15 հոգի/ իրենց երեխաներին չեն ուղարկում մանկապարտեզ ցրտի, ոչ բավարար հիգիենիկ պայմանների, նախադպրոցական կրթության կազմակերպման ոչ պատշաճ շենքային պայմանների պատճառով:Վերանորոգման արդյունքում կունենանք մանկապարտեզ սիրով հաճախող երեխաներ և նախադպրոցական կրթությունից գոհ ծնողներ:

Ծրագրի արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաներ ունեցող կանանց զբաղվածության խթանման մասին

Մանկապարտեզի վերանորոգումից հետո թե՛ Տաթև, թե՛ հարակից Սվարանց և Տանձատափ բնակավայրերի երիտասարդ մայրերը հնարավորություն կունենան աշխատել, որով շուրջ 20 տնտեսություններում կավելանա ամսական միջին եկամուտը:

Ծրագրի արդյունքում 3 հիմնական և 10-15 ժամանակավոր աշխատատեղերի ստեղծման մասին

Մանկապարտեզի վերանորոգման ժամանակ շինարարական աշխատանքների իրականացման համար ստեղծվելու 10-15 ժամանակավոր աշխատատեղ: Վերանորոգման արդյունքում կունենանք երեխաների թվաքանակի ավելացում, որը

կհանգեցնի 3 նոր հիմնական աշխատատեղի/դայակ, դայակների օգնական/ ստեղծման:

Ծրագրի արդյունքում բնակավայրի գյուղացիական տնտեսություններում եկամուտի ավելացման մասին

Մանկապարտեզի վերանորգման ժամանակ ստեղծվելու է 10-15 աշխատատեղ /բոլոր աշխատողները լինելու են Տաթև բնակավայրից/, որի վարձատրությունը կազմելու է մոտ 95000 ՀՀ դրան/ամսական/:Մանկապարտեզի շահագործման արդյունքում ունենալու ենք 3 նոր հաստիքների ստեղծում, որոնց վարձատրությունը կազմելու է մոտ 68000-80000 ՀՀ դրամ/ամսական/:

Մանկապարտեզին կից սպորտային մինի-խաղահրապարակի ստեղծման մասին

Վերանորոգման ավարտից հետո նախատեսվում է մանկապարտեզին կից տարածքում սպորտային, ժամանցային, մարզասարքերով հագեցած մինի-խաղահրապարակի ստեղծում, որը պետք է ծառայի և՛ մանկապարտեզին, և՛ դպրոցին, և՛ գյուղաբնակներին:

Ծրագրի իրականացման ժամանակ ֆինանսական միջոցների վերաբաշխումն ըստ տարիների

Ֆինանսական հաշվարկների վերջնական գնահատումից պարզ է դարձել, որ ընդհանուր ծրագրի իրականացման համար ներդրվելու է 44.5 մլն դրամ, որից՝

2022 թվականին	**2023 թվականին**
Վերանորոգում՝ 34 մլն դրամ	Կահավորում՝ 2 մլն դրամ
Ֆոտովոլտային կայանի տեղադրում՝ 8.5 մլն դրամ	

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքում մանկապարտեզի վերակառուցման վերաբերյալ

Տաթև բնակավայրի բնակչությունը շուրջ 650 մարդ է:

2022 թվականի հունվար ամսի դրությամբ Տաթև բնակավայրի ՆՈՒՀ է այցելում 40 երեխա, սակայն կանխատեսվում է ՆՈՒՀ այցելող երեխաների թվաքանակի աճ՝ տարեվերջին՝ շուրջ 60, 2023՝ շուրջ 76, 2024՝ շուրջ 84 երեխաներ՝ հաշվի առնելով համայնքում ծնելիության թվերը : Դրա հետ մեկտեղ Տաթև բնակավայրում վերանորոգված մանկապարտեզը կարող է ընդունել նաև հարևան բնակավայրերի՝ Սվարանցի/8 երեխա/ (Սվարանց-Տաթև հեռավորությունը 2կմ է) և Տանձատափի /6 երեխա/(Տանձատափ-Տաթև հեռավորությունը 3 կմ է) նախադպրոցական տարիքի երեխաներին, քանի որ նշված բնակավայրերում բացակայում է մանկապարտեզը և նախադպրոցական տարիքի երեխաները զրկված են մանկապարտեզ հաճախելու հնարավորությունից:

Մանկապարտեզի կառուցումը կնպաստի երեխաների նախադպրոցական կրթության ապահովմանը, համայնքում նկատվող արտագաղթի կանխմանը, երիտասարդ ընտանիքների հայրենի գյուղում ամրապնդմանը, գյուղատնտեսության ծավալների ընդլայմանը և զբաղվածների թվի ավելացմանը:

Մանկապարտեզի վերանորոգումից հետո թե՛ Տաթև, թե՛ հարակից Սվարանց և Տանձատափ բնակավայրերի երիտասարդ մայրերը հնարավորություն կունենան աշխատել, որով շուրջ 20 տնտեսություններում կավելանա ամսական միջին եկամուտը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն առարկություն չունի Հայաստանի

Հանրապետության ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքում մանկապարտեզի վերակառուցման վերաբերյալ: